ԸՆԹԵՐՑՈՂԻՆ.

Գործիս վերնագիրը՝ ՀԱՒԱՔԱՐԱՆ ԱՆՈՒԱՆՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱՑ՝ ձեռագրի յիշատակարանումն է միայն երևում և ոչ սկզբում, ինչպէս սպասելի էր։ Մենք, մեր յիշատակութեանց մէջ, բաւական ենք համարում հէնց միայն Հաւաքարան միակ բառն էլ իբրև խորագիր, ինչպէս մեզնից առաջ արել են ուրիշներ։

Ձեռագիրը սեփականութիւն է Աղթամարի կաթուղիկոսական տան և փոխադրուած է Մայր Աթոռ անցեալ 1915 թուի ամառը. գրութեան թուականն է, ինչպէս տեսնում ենք յիշատակարանում, ՌՄՀԳ=1824.

Այստեղ, հրատարակութեանս սկզբում, կարևոր ենք համարում յայտնել, որ ընդօրինակութիւնը կատարուած է մեր իսկ ձեռով եւ տառացի ճշտութեամբ։ Ոչ միայն բուն Հաւաքարանի մասն է գրի առնուած, այլև զանազան բովանդակութիւններով և զանազան գրիչներից մուծուած ոտանաւոր և արձակ գրուածներ, որոնց պատահեցանք միևնոյն հատորում։

Չենք ծանրանում գործիս վրայ իբրև մի մեծ պատմական յիշատակարանի. որովհետև, ինչպէս պիտի տեսնէ ընթերցողը, սա գրուած է որոշ դիտումով, այն է՝ բարձրացնել Աղթամարի կաթուղիկոսութեան և վանքի դիրքն ու հեղինակութիւնը։ Բայց հէնց պատմութեան համար իր թէ տուաւելութիւններով և թէ թերի կողմերով, մի կարևոր վաւերագիր է, որ ցարդ այսպիսի լրութեամբ դեռ չէր լոյս տեսած։